Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Գարեգին Սարգսյան

2. Գործուղման վայրը և ժամկետները

Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայան, հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 2-ը

3. Հրավիրող կողմը-

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման նպատակն էր Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում, Հայաստանի Հանրապետության անկախության 35-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներ, այդ թվում՝ անվանի հայագետ, լեզվաբան, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի ծննդյան 150-ամյակին և Երևանի Հանրապետության հրապարակի շինարարության մեկնարկի 100-ամյակին նվիրված միջոցառումների նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքների իրականացումը, հայկական մշակութային ժառանգության, երաժշտարվեստի և պատմամշակութային արժեքների միջազգային ներկայացմանն ու հանրահռչակմանն աջակցելը, ինչպես նաև միջազգային մշակութային համագործակցության ամրապնդումը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակում հայկական մշակութային ներկայության ընդլայնումը, ինչպես նաև զարգացնել ՊՈԱԿ-ի միուս մասնաճյուղերի հետ հետագա համագործակցության հնարավորությունները:

5. Քննարկված թեմաները

ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Հայաստանի միջև մշակութային համագործակցության ընդլայնման ու հետագա համատեղ նախաձեռնությունների իրականացման հնարավորությունները:
Հայկական մշակույթի միջազգային ճանաչելիության բարձրացման և միջմշակութային երկխոսության զարգացման հեռանկարները:
Հայկական երաժշտական ժառանգության միջազգային ներկայացման և հանրահռչակման հնարավորությունները:
Հայկական մշակութային արժեքների պահպանման, տարածման և միջազգային մշակութային հարթակներում ներկայացման կարևորությունը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման շրջանակում տեղի են ունեցել հանդիպումներ և աշխատանքային քննարկումներ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել մշակութային համագործակցության զարգացմանն ու համատեղ ծրագրերի իրականացման

հեռանկարներին, միջազգային հարթակներում համերգային գործունեության ընդլայնմանն ու փոխադարձ հյուրախաղերի կազմակերպման հնարավորություններին, ինչպես նաև մշակութային դիվանագիտության զարգացմանն ու միջազգային մշակութային կապերի խորացմանն ուղղված նախաձեռնություններին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպումների ընթացքում ներկայացվել են Կամերային երաժշտության ազգային կենտրոնի գործունեությունը, առաքելությունը, ինչպես նաև նրա ենթակայությամբ գործող վեց երաժշտախմբերի ստեղծագործական ուղին, գործունեության հիմնական ուղղություններն ու ձեռքբերումները:

Քննարկումների առանցքային թեմաներից է եղել հետագա համագործակցության շրջանակում կենտրոնի ենթակայությամբ գործող երաժշտախմբերի ներգրավման հնարավորությունների դիտարկումը և համատեղ մշակութային ու համերգային ծրագրերի իրականացման հեռանկարները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվում է շարունակել և ընդլայնել ՅՈՒՆԵՍԿՕ-ի և միջազգային մշակութային կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ հայկական մշակութային ժառանգության և երաժշտարվեստի միջազգային ճանաչելիության բարձրացման նպատակով:

Մասնավորապես՝

- շարունակել հայկական կամերային երաժշտության միջազգային ներկայացման ծրագրերը,
- նախաձեռնել միջազգային համերգային և մշակութային ծրագրեր՝ ներգրավելով Կամերային երաժշտության ազգային կենտրոնի մյուս խմբերին,
- զարգացնել համագործակցությունը միջազգային մշակութային կառույցների և գործընկեր կազմակերպությունների հետ,
- նպաստել հայկական երաժշտական ժառանգության հանրահռչակմանը և միջազգային մշակութային հարթակներում Հայաստանի ներկայացվածության ընդլայնմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

04.11.2026